

դէպի աջ կողմը՝ կամարին տակն է, որ հայ ազգին սեպհականութիւնն է: Այստեղ եկան յիշեալ սուրբ կիները միաշաբաթի առաւօտուն Յիսուսի մարմինը խնկելու, որ արդէն յարութիւն առած էր (անդ. էջ նոյն):

Սոյն սեղանին կից սիւնը, կայսերական քուած կամարին հարաւային ոտքն է, նոյն սիւնին վրայ Հայերը ունին Ղազարու Յարութեան մեծ պատկեր մը (Հ. Վ. Ե. էջ 172):

#### ԺԳ. ԵՐԿՐՈՐԴ ԳՈՂԳՈՅԱ

Ուշաթափման տեղէն վեր կ'ելլուի Հայոց Վերնատունը, որ երեք մասերու բաժնուած է, և Ս. Յարութեան մէջ առանձին եկեղեցի է Հայոց սեպհական, ուր գիշերային և տուընջեան ամէնօրեայ ժամերգութիւններ կը կատարուին Հայ Միաբանութեան կողմէ, և ուզած ատեննին, բայց սովորաբար երկու շաբաթը անգամ մը կիրակի օրեր Ս. պատարագ կը մատուցանեն. այս տեղը երկրորդ Գողգոթա կ'անուանուի. ըստ որում յիշատակարանները կը պատմեն թէ Մարտիրոս պատրիարք Եգիպտացի († 1441) չի կարենալ լով գլուխ ելել Վրաց հետ, որոնք 1422էն մինչև 1439 քանի մը անգամ Հայոց ձեռքէն յափշտակեցին սուրբ Գողգոթան անուզիլ միջոցներով, ուստի յիշեալ պատրիարքը Եգիպտոսի Սուլթանէն այս տեղը խնդրեց ու ստացաւ արծաթով և վերագարձին յատուկ եկեղեցի մը շինեց 1439ին Երկրորդ Գողգոթա կոչելով զայն, որովհետև ձիւղ Գողգոթայի դէմ առ դէմ է ան: Ըստ աւանդութեան, շատ առաջները թագաւորներ և թագաւորագուհիներ այս տեղ կը կենային իրենց ուխտաւորութեան միջոցին: